

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мелі“

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Կլասիկային ուսման ներդրածութիւնը: — Եւ երբ ինքն անհոգութիւն: Վրաց թատրոնը, Նամակ խմբագրի: Ներքին լուրեր: Արտաքին տեսչութիւն: Իտալիա: — Խառն լուրեր: — Յայտարարութիւններ: — Տեղեկացոյց: — Բանասիրական: Շէկլայի վրացերէն:

ԿԼԱՍԻԿԱՑԻՆ ՈՒՍՄԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Դեռ «Մշակի» գոյութեան առաջին տարին մենք նուիրեցինք մի յօդուած կլասիկային ուսման երիտասարդների վրա ներգործութեան խնդրին («Մշակ» 1872, № 44): Մեր յօդուածը, որի վերնագիրն էր «Կլասիկային ուսման փաստերը» ցոյց էր տալիս թէ ինչ գաղափարներ, ինչ անբարոյական սկզբունքներ կլասիկային ուսումը սերմանում է ժամանակակից հասարակութեան երիտասարդ սերունդի մէջ և ինչ կապ կայ հին աշխարհի կլասիկային

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇԵԿԼԱՅԻ ՎՐԱՑԵՐԷՆ

(Ներկայացում 3-ին անգամը քաղաքային թատրոնում)

Հազար ութ հարիւր յիսուն թվականներից, երբ կլասիկային երեւելի քաղաքացիական իշխան Վ. Բորիսով հասկացաւ թատրոնի անհրաժեշտութիւնը, իբրեւ ամենամեծաւոր միջոց լուսաւորութիւնը, ընդհանուր մարդկութեան վրա սեւ գաղափարները տարածելու օրինակ, այդ լուսաւորման անգլիս պետութեան հեռու գաւառների մինչ մայրաքաղաքում, որտեղեւ քաղաքակրթութիւնը պէտք է հետեւաբար տարածէր իր ազդեցութիւնը ամբողջ կովկասում:

Ինչպան Վ. Բորիսով նկատեց վրաց ազգութեան էլէմէնտը, իբրեւ առաւել զգայուն, առաւել ընդունակ, առաւել ուժեղ և գործունէ տարր ներածելու թատրոնական գաղափարը Թիֆլիսում:

Հայերը այդ ժամանակ քնած էին խորը քնով և մեր հաստափոր քաղաքացիները, թէ այդ ժամանակ և թէ այժմ, զբաղված էին միայն իրարու գոփ և լէլելով:

Վրացիները ունեցան կանոնաւորված խումբ, որովհետ օրեր իւրեանց ներկայացումների համար հանգուցեալ քաղաքային թատրոնում և օժանդակութիւն կառավարութիւնից: Միայն երկար չը տեսց այդ գործունէութիւնը, որովհետև Վ. Բորիսովը հեռանալուց յետոյ, այդ խումբը ընկաւ բարոյապէս, չունենալով այլ ևս Վ. Բորիսովի նման հզօր պաշտպան ու հարուստ բաղամտեակ ղեկավարաւ:

Տարաբաղադրար և այդ ունեցած բոլոր խաղարկութեանց թէ կօմիդը և թէ դրամատիգը հիմնված էին միայն հայութիւնը ապագակու և նրա վրացերէն լեզուի ճիշդ չիմանալու պատճառով: Կապալիսի մի ընդունված ձևաբանութիւն էր վրաց

ուսման վարդապետութեան և այժմեան սօցիալիստների վարդապետութեան մէջ:

Բացի սորանից ու չը գիտէ թէ այն օրից երբ Ռուսաստանում մոնղվեցաւ կլասիկային ուսումը, ուսաց, մանաւանդ մայրաքաղաքների լրագիրները սկսեցին արձանագրել զիմնադրանքների բարձր դաստիների աշակերտների յաճախ կրկնվող անձնասպանութիւնները: Թողնենք այդ բոլորը և գցենք մի անցաւոր հայեացք այն երեւոյթի վրա թէ որքան անյաղթելի դժուարութիւններ է ներկայացնում կլասիկային առարկաների ուսումնասիրութիւնը մեր Կովկասեան ազգերի, մանաւանդ հայերի նոր սերունդի համար:

Եւ ակայեցէք ձեզ որ մի վերացի, օս, կամ թուրք երեխայ ուղղակի գիւղից եկած մտնում է Թիֆլիսի կլասիկային գիմնազիա: Նա հազիւ հազ գիտէ ուսերէն:

դրամատուրգների համար, որ նրանց երեւելի Անտոնով, (հայ ազգութեամբ) արդիւնաբեր հեղինակի ոչ մի թատրոնական գրուածք չէր գտնի՝ սկսած «Յոնք յոնք յոնք» (Եւ ուղում եմ իշխանուհի դառնալ) մինչև անչափ ու անկանոն «Ծոփ» (Ծոփ) (Արեւի խաւարում) անուանված պիեսան, որի մէջ նպատակ չը լինի հային, վրացերէն լեզուով դունչ ու պրուզը ծովագնացելով, խոսացնել բեմի վրա:

Ինչպէս ասացինք, այդ խումբը ընկաւ և վրաց թատրոնի գաղափարը երկար տարիներով քննուող յետոյ, սկսեց զարթնել վրացիների մէջ հայերի սաստիկ տաք թատրոնական գործունէութեան ժամանակ վաթսուս թվականներին:

Վրացիների նոր թատրոնական գաղափարը ըմբռնողները, սկզբում հետեւեցին իրանց նախորդների բռնած ճանապարհին:

Տեղական հայ մամուլը, գլխաւորապէս «Մշակը», բացատրեց վրաց թատրոնասէրներին նրանց բռնած ճանապարհի սխալմունքը: Արդարեւ վրաց թատրոնը փոխանակ հայի վատ վրացերէն խօսելը ծաղրելու, սկսեց հետաքրքրվել ուրիշ առաւել իմաստուն գաղափարներով և անհ հասաւ մինչև այն աստիճան կատարելութեան որ ամայոյ 3-ին տուեց «Վէնէտիկի Վաճառական» անուանուած անմահ հեղինակ Շէկլայի սքանչելի դրաման: Փառք և պատիւ վրաց երիտասարդութեան և փառք և պատիւ նրանց գլխաւոր թատրոնասէր, գործող անձինքներին օր, և պ. Կիլիաններին: Միայն... Հիմարութիւնը չէ սիրում կեղծաւորութիւն, նա պահած, ծածկված կը խեղդի, իսկ բացատրութիւնամբ կը զարգանայ և զարգանալով մեծ օգուտներ կը բերէ իր հետնորդներին: Արդարեւ որ այդ պիեսայի իմաստը մեծ, երեւի և հանձաբաւոր իմաստ է, և որ ամեն մի թատրոնական բեմ առանց Շէկլայի ըմբռնելու չէ կարող իր գոյութիւնը ապահոված և արդիւնաբեր համար:

*) Այդ պիեսան շատ անգամ է ներկայացրած հայերէն լեզուով, միայն ոչ ամբողջապէս:

Եւ ահա առաջին դաստանից նա արդէն ստիպված է լինում սովորել լատիներէն լեզուն, երկրորդ կամ երրորդ դաստանից յունարէն և յետոյ հին սլաւոնական լեզուն: Նա ուսումնասիրում է հին կլասիկներին, վարժվում է յունարէն և լատիներէն շարադրութիւններ և ոտանաւորներ գրելու: Սորան աւելացրէք ուրիշ բազմաթիւ առարկաներ և կենդանի լեզուներ և ձեզ պարզ կը լինի ինչ է պատճառը որ մեր տեղական ազգաբնակչութեան բազմաթիւ երեխաներ մտնում են գիմնազիա, բայց նրանցից շատ քիչերը հասնում են մինչև վերին դաստանները, իսկ նրանցից մեծ մասը կանգ են առնում ուսման ընթացքում, ոյժ չունենալով շարունակել իրանց ուսումը և դուրս են գալիս գիմնազիայի երրորդ, չորրորդ, հինգերորդ դաստանից:

Կովկասեան հայ երեխայի հա-

րել, բայց Շէկլայի ճիշտ հասարակ անելը անհերքելի սխալմունք է:

Ամեն մի ուրիշ թատրոնական գրուածքի համար կարելի է միմեծ ասելով «վերցնենք և խաղանք այս կամ այն ինչ պիեսան», բայց Շէկլայի պիեսաների մասին այդ չէ կարելի ասել: Եւրոպայի և Արևմտաւոր հարուստ թատրոններում անգամ, զգուշանում են Շէկլայից, նաև նրա հակա-հերոս Շէկլայից, այդ քրիստոնէութեան գաղափարի վրա զցած արատից, որը հազիւ թէ նոր տաճարներէն զարը սկսեց տեղ տեղ մաքրել: Չերկարացնենք, Կիցուք թէ վրաց թատրոնասէրները զգում են իրանց այնքան ուժեղ որ կարող են ձեռք տալ Շէկլայի լին, բայց միթէ նրանք չը գիտեն որ այդ բանը անելու համար հարկաւոր է երկար ու երանկ մտածել:

Նախ պէտք է որոշել նպատակը թէ ինչ միջոցներով ձեռք տալ Շէկլայի լին. դրա համար բաւական չէ մի երկու անձնաւորութիւն միայն քոյր և եղբայր Կիլիաններ, հարկաւոր է անսամբլ խաղացողների ընդհանրութիւն: Երկրորդ Շէկլայի բոլոր պիեսաները այնքան բազմապատկառ ընդհանուր մարդկութեան մտքեր են ամփոփում իրանց մէջ, որ մի որ և ից խելացի թատրոնական ոյժը իրան համեմատ տեղիք կարող է ըմբռնել ամբողջ հինգ գործողութիւններով գրված պիեսայից և հազար լաւ խղճամտեղով մշակելուց յետոյ բեմ դուրս բերել: Որինքով «Վէնէտիկի վաճառական» մէջ, կարելի էր բաւականանալ միայն գլխաւոր միտքը յայտնելով այդ պիեսայի, հրէայի սարսափելի դրութիւնը քրիստոնէաների չըմանում և նրա սաստիկ վրէժանդրութեան ծարաւը յագեցնելու նպատակը, մշակել միայն երկու տեսարանների մէջ և բաւականանալ դրանով: Իսկ ինչ արին նրանք խեղճ Շէկլայի ճիշտ անգամ և ինչպէս ասում են մօր թեցին, ծովագնաց նրա ամբողջ գործողութիւնները իրանց անկար ու անկապ զէտից զէտից հաւաքած անձնաւորութիւններից կազմած անսամբլ խաղով, Հաւատացնում եմ որ այդ տեսակ ձեռնամուխ լինել Շէկլայի լին, այդպիսի անխոհմտութեամբ վարվել մի որ և ից նորածին թատրոնի գործունէութիւնը

մար գուցէ աւելի էլ փաստակարէ այդ կլասիկային ուսումը, քան թէ մեր Կովկասեան միւս ազգերի երեխաների համար: Հայր այնպէս էլ ունի իր սեփական կլասիկային լեզուն, հայոց գրաբարը, որ մեր գրեթէ բոլոր երեխաները, մանաւանդ գաւառացիները գիմնազիա մտնելուց առաջ էլ քիչ թէ շատ սովորել են: Մանաւանդ այդ կլասիկային ուսման հիմքը ունեն մեր հոգեւոր դպրոցներից դուրս եկածները: Եւ այդ կլասիկային ուսումը իսկապէս նրանց ապագայ զարգացման համար բաւական կը լինէր: Բայց ոչ գիմնազիան ստիպում է նրանց իրանց արդէն գիտեցած գրաբարի վրա աւելացնել լատիներէն, յունարէն և սլաւոնական հին լեզուները: Աւելացրէք սորան բնական գիտութիւնները, մաթէմատիկա, նոր լեզուները, որոնք հային, իր մտքի գործնական ուղղութեան

առաջ տանելու համար, դա նշանակում է գործը սկզբում հէնց խեղդամահ անել: Այլ ևս չերկարացնելով մեր յօդուածը, մենք բոլոր սրտից ցանկանում ենք վրաց թատրոնասէրներին օգուտ քաղել այդ սխալմունքից և ապագայում զգուշ լինել առանց հիմնաւոր պատրաստութիւնների և բաւականաչափ ոյժի ձեռք տալ այն բանին որը այդ ոյժից բարձր է և որի իրագործելը գոհարամարս և անգամ փաստակարէ թատրոնական գործին:

Խաղացողների դերերի կատարման մանրամասները լուսնութեամբ ենք անցնում: Ուրիշ կողմից մենք մի այնպիսի ուրախակալ տպաւորութիւն դուրս բերինք այդ վրաց ներկայացումից, որ մեզ հաստատում է այն կարծիքի մէջ որ ինչպան Վ. Բորիսով շատ մեծ նախագուշակութեամբ մատանի է արել վրաց տարրը, իբրեւ ընդունակ և զգայուն տարր թատրոնի գաղափարը ներածելու Կովկասի ազգաբնակչութիւններում:

Փորձեցէք մի որ ից հայերէն ներկայացումի համար հայ տիկիներ և օրիորդներ գտնել (շատ քիչ բացառութեամբ) որ նրանք բեմ դուրս գան, կամ ինչպէս մեր մի քանի դատարկազուկ շապովի Զէնալմիշները ասում են ակտիօրութիւն անել, և այն ժամանակ ընթերցողը կը համոզվի ինձ հետ միասին որ վրաց կանանց դասի մէջ միայն կարելի է գտնել այդ վաւերութիւնը, այդ պատրաստութիւնը չամաչել բեմ դուրս գալ, ակտիօրութիւն անել յօգուտ և ի նպատակ իր մայրենի լեզուի սիրոյն:

Այդ երկու մենք նկատեցինք մօտ 8 թէ 9 իշխանուհի, ազնուականուհիք, օրիորդներ և տիկիներ բեմի վրա, այն ինչ հայի ընտանիքում, որի մէջ շատ իրանց կրթված համարող կանայք ու օրիորդներ են գտնվում, ոչ թէ միայն բեմ դուրս գալ, այլ և խօսել անգամ իրանց մայրենի լեզուով անպատուութիւն են համարում:

Հնորհով աւելի զբաւում են քան թէ անցած, հնացած իմաստութիւնները, — և ձեզ պարզ կը լինի թէ հմուտութիւններին ինչ խառնաշփոթ պաշար մին միւսի վրա զիջվում է ողորմելի զարաբաղցի, լուռեցի կամ արարանցի հայի գրխում...

Հայը գուցէ աւելի տոկունութիւն, աւելի աշխատասիրութիւն, աւելի համբերութիւն ունի ամեն բանի մէջ և ուրեմն ուսման մէջ քան թէ մեր միւս ազգաբնակչութիւնների նոր սերունդի ներկայացուցիչները և նա անպատճառ կամենում է մինչև վերջը հասցնել իր գիմնադրական ուսումը:

Ուսման այդ տեսակ մեթոդը կարող է պատճառել խելագարութիւն, որովհետեւ երիտասարդի ուղեղին ներկայացնում են հմտութիւնների այնպիսի խառն և բազմատեսակ, այնքան ահազին և անմարտելի պաշար, որին ընդունել իր երիտասարդի մտաւոր ոյժի կարողութենից վեր է:

Եթէ մենք այդ խօսքերը արտասանենք առանց որ և է հաստատ հետազոտութիւն աչքի առջև ունենալու, մեզ իրաւունք կու նենային մեղադրել որ մենք անհիմն և փաստակար մտքեր ենք յայտնում, որ մենք բամբասում ենք կլասիկային ուսման վրա:

Բայց ցաւելով տեսնում ենք որ մեր ասածը հաստատում է, ներկայացնելով մեզ ճիշդ թւանշաններ, այնպիսի մի յարգելի հիմնարկութիւն, ինչպիսի է մեր Առկաւան բժշկական ընկերութիւնը: Ուշադրութիւն ենք դարձնում մեր ներկայ համարի մէջ տպված ներքին լուրի վրա: Բժշկական ընկերութիւնը հրապարակապէս վերկայում է որ մեր քաղաքային հիւանդանոցի խելագարների բաժնի մէջ գտնված հիւանդների 16⁰ կազմում են մեր կլասիկային գիմնադրական բարձր դաստաների աշակերտները...

Այդ պրօցէնտը սարսափելի մի պրօցէնտ է և ճշմարիտ կարող է ստիպել մեր ծնողներին և մանկավարժներին շատ և շատ մտածել այդ տխուր երևոյթի վրա:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎՐԱՅ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի ապրիլի 3-ին վրաց թատրոնատեների խումբը բարեգործական նպատակով ամառային թատրոնում տուեց մի

ներկայացում: Խաղում էին Շէկսպիրի Շէյլդի Գ. Կիպլանու թարգմանութիւնը Անգլիերէնից: Վրաց հասարակութիւնը լըրել էր թատրոնի դահլիճը: Մենք շատ խիստ չենք վերաբերվի թատրոնատեների ընտրութեանը ինչքան էլ խաղը վատ լինէր, որովհետեւ այդ, եթէ չեմ սխալվում, առաջին անգամն էր, որ վրաց հասարակութիւնը իր մայրենի լեզուով լսում է երևելի հեղինակի գրվածները մէկը: Վաղ թէ ուշ Շէկսպիրի գրվածները մէկը պէտք է խաղացվէր և առաջին անգամ իր թերութիւնները ունենար:

Ներկայացման աջողվելուն ամենից շատ խանգարում էին պ. պ. Բաբրաձէ և Կէզէլ, որոնցից առաջինը կատարում էր Բասանի սիրահարի դերը, իսկ երկրորդը Անտօնիօ վաճառականի դերը, որի չորս կողմը պատում է պիեսայի գործողութիւնը: Նրկուն էլ իրանց սատը խաղով սաստիկ արգելում էին գործողութեան կանոնաւոր զարգանալուն:

Պիեսայի զլխաւոր դերեր Շէյլդը, կատարում էր պ. Կ. Կիպլանի, որի խաղը երևում էր թէ նա ըմբռնել է թէ զրկածքի և թէ իր դերի նշանակութիւնը, բայց այնուամենայնիւ նա չէր կարողացաւ կենդանի ներկայացնել դարերով հալածված հրէային, որի սիրտը անշափ ճնշումից այնքան քարացել է, որ այլ ևս ընդունակ չէ ներող լինել, այլ անպատճառ կամենում է վրէժխնդր լինել իր դարերը թշնամուց, քրիստոնեայից և նրա մարմնից անպատճառ մէկ ֆուտո միս կտրել: Պ. Կիպլանի սկզբից սխալ ընթացք էր բռնել: Նա կամենում էր ներկայացնել Վրաստանի հրէաներից մէկին և առանձին ուշադրութիւն էր դարձրել որ իր խօսակցութեան ձեւը, արտասանութիւնը, շարժվածքները նրանակէին այն հրէաներից մէկին, որոնց պատահում ենք Փուլթայիսի և Սուրամի շրջականերում: Շէյլդը իր մէջ ամփոփում է ամբողջ հրէայ հալածված ազգը: Նրա մէջ բոլորվին հետաքրքիր չէ տիպը, այլ նշանաւոր է նրա հոգեկան դրութիւնը, նշանաւոր է նրա ատելութիւնը դէպի քրիստոնեաները և եթէ այդ դերը մաքուր զբաղան լեզուով խաղացվի, աւելի մեծ տպաւորութիւն կունենայ, որովհետեւ հրէայի արտասանութեան ձեւը ծիծաղ է շարժում և խանգարում է խաղին, այն ինչ այդ դերը պէտք է ծանր, ինքն իրան մեղադրող տպաւորութիւն թողնէր հասարակութեան վրա, որ մինչև այժմ էլ պատահած ժամանակ հալածում է հրէային: Հրէայի ծիծաղաշարժ արտասանութիւնը և շարժվածքները տեսնում ենք ամեն մէկ հասարակ զրկածքի մէջ: Շէյլդը դրանց թրւում չէ:

Ձը նայելով այս թերութիւններին պ. Կիպլանի լաւ կատարելի իր դերը մանաւանդ որ նա սկզբից մինչև վերջ խաղը պահպանեց, մինչև վերջը միակերպ խաղաց:

Օր. Կիպլանի կատարում էր Պրօքրայի դերը: Աւելի լաւ խաղ մենք փորձված դերասանուհուց չէինք պահանջել: Օր. Կիպլանի մանաւանդ լաւ էր լինում այն տեսիլներին ժամանակ, երբ նրա փեսացուները փորձում էին իրանց բաղդը, արկղները մէջ ընտրողութիւն անելով: Կասկած, տխրութիւն, ուրախութիւն այս բոլոր զգացմունքները մի բոլորում արտայայտվում էին նրա երեսի վրա և փոփոխվում շատ բնական կերպով: Նա լաւ փոխել էր ձայնը, երբ տղամարդու շոր հագաւ և սկսեց Անտօնիօի գործը քննել: Օրիորդին հագու կարել էր ծանալել: Ափսոս որ օրիորդը ուշադրութիւն չէր դարձրել իր հագուստի վրա, որ արդեան փարիզուհու հագուստ էր: Միւս խաղացողներից լաւ էր միայն Շէյլդի ծառան: Լաւ կը լինէր, որ վրաց թատրոնատեները չը բաւականապէս մէկ ներկայացումով:

Յ. Տէր-Գրիգորեան:

ՆԱՍՏԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Բազու մարտի 24-ին

«Մշակի» № 32 և 33-ում կարգացրեք «Մարդասիրական Ընկերութեան» տարեկան ընդհանուր ժողովի նկարագրութիւնը՝ «Հանդիսատեսում» ստորագրութեամբ: Խաղաղասիրական նպատակով համբերել կամ լռելը ևս պէտք է չափ ունենայ, իսկ այդ կողմից մինչև այժմ ես չափազանցութիւն եմ արել, ուստի և հարկ եմ համարում այսօր համառօտ կերպով միայն պատահանել «Հանդիսատեսին» գրութեան այն կէտերին, որոնցում նա յայտնապէս մեղադրում է ճշմարտութեան դէմ:

Բազուի հասարակութիւնը մի օրինաւոր առաջնորդողի կարիք ունէր, և մենք հրաւիրեցինք հ. Ստեփանէին: Մենք մեծ ողորութեամբ և անկալութիւններով ընդունեցինք նրան և այնպիսի պատիւ և յարգանք ցույց տուինք, որին ոչ մի հոգեւորական արժանացած չէր այստեղ: Հասարակաց օգուտը ցանկալով մենք լիակատար ազատութիւն և ընդարձակ ասպարէզ տուինք նրան գործելու, որ ինչ արժան էր: Այս բոլոր գործողութիւնները մէջ ամենաշնորհ և առաջաւոր աշխատողներից մէկը եւ եմ եղել: Մի ամիս հազիւ անցաւ խաղաղութեամբ, որովհետեւ թէ ինքը նոր եկած էր և թէ մարդիկը սպասողական դրութեան մէջ էին: Այնուհետեւ նա իր մեծօրը լիպպէս հանդէս հանեց, բարկութիւնը, անողորմ ծեծը, անարդ հայհոյանքները և անպատուութիւնները զզվելի և անտանելի եղան ամենքին: Ժողովրդի մէջ արտունջը և տաճութիւնը դժբախտ էր օրըստօրէ: Մենք հասկացանք մեր արած մեծ սխալը, ցաւեցինք մեր փողերի ու մեր մանուկների կորցած ժամանակի համար և խորհեցինք խաղաղ կերպով կրկին հեռացնել, բայց հ. Ստեփանէն կարողացաւ յանկարծակի զանազան միջոցներով մեր միջև ունան հրապուրել և այդպիսով կուսակցութիւն կազմել: Ընկերութիւնը այս նկատելով, բարեւը համարեց փոքր ինչ թող թողնել բանը, որ ժամանակը և իր գործերը հեռացնեն իրան, իսկ ես յանցանք համարելով վատութիւնը պաշտպանել հեռացայ:

Ես ոչ մի առարկայի ուսուցանելու դէմ չեմ եղել և չեմ այժմ: Այսքանը գիտեմ, որ իւրաքանչիւր առարկայ իր նպատակը և օգուտը ունի, միայն թէ նորա ուսուցանողը և ուսուցանելու տեղը ժամանակը և եղանակը յարմարաւոր և պատշաճաւոր լինեն: Օրինակ՝ նա օրիորդներին մարմնամարզութիւնը յանձնել էր մի ղեկավորի, առանց կրնարմատի վերակացութեան, սորա մասին ծընողներից շատերը բողոքելով և դառն զանգատներ անելով՝ ես ևս բողոքել եմ, որպէս զի արտունջը չը մեծանայ օրըստօրէ: Իմ հեռանալու պատճառը նրա հակամանկավարժական ընթացքն է:

Խորհրդի անդամութիւնից հրաժարվելու խնդիր պ. պ. Բաղդիւրեանց և Դատուրեանց ևս ներկայացրին, և պ. Թումայեանցն էլ պատրաստ ունէր տալու, նա տեսնելով, որ մեր խնդիրը չընդունեցին ինքն էլ չը ներկայացրեց: «Հանդիսատեսը» «ցած անձնական կրքեր» է տեսնում իմ մէջ. չէ կարելի արդեօք պարզ ասել թէ ինչ կրքեր են դրանք՝ արդեօք ինչպէս կարելի էր, որ ես այնքան աշխատեցայ և հ. Ստեփանէին բերել տալուց յետոյ՝ նրան ընդդէմ լինելի դուր տեղը: Միթէ ինձ համար փոքր օգուտ և ուրախութիւն էր, որ նա լուսաւորէր թէ իմ և թէ մեր հասարակութեան զաւակներին: Բացի դրանից՝ նամակագիրը ինձ անուշաւ է՝ միակ անձն Բազուի մէջ թշնամի և հակառակորդ է. Խորհրդի գործողութիւններին՝ այդ ուղի է: Ես և նրան ձախաչողները ամեն ժամանակ հակառակ ենք եղել նրա անվայել գործողութիւններին: Ամբողջ մի տարի է, որ հ. Ստեփանէի պատճառով և նրա ջանքով խաղաղ ու միաբան հասարակութիւնը աղմկեցաւ և երկպառակցեց: Ամեն անգամ խորհրդի գնալիս նրա մասին անտեղի վէճեր տեսնելով մարդ վերաւորվում է և զայրանում: Նրբ իմ հրաժարականը կամենում էին յետ դարձնել՝ ես պնդեցի, որ ընդունեն և պատճառը յայտնեցի, այն, ես ասացի որ չեմ կարող պաշտօնս չարունակել, որովհետեւ ես նրա վարմունքը տեսնելով չեմ կարող համբերել և լռել, իսկ դրանցից անընդհատ վէճեր և տարաձայնութիւններ լոյս կրնաննել: Նրբ տեսայ որ հրաժարականս չեն կամենում ընդունել և համոզում էին մնալ, աւելի բարեւը համարեցի թողնել ժողովը և գնալ, որպէսզի երկար խօսելու տեղիք չը լինի: Կանանից յետոյ հ. Ստեփանէն սկսում է բարձրագոյն ձայնով այլ կերպ բացատրել իմ ասած «անբարոյա-

կան բառը և զրգուել ժողովականներին իմ դէմ, այդտեղ ունանք իմ հրաժարվելու եւ կամեցել, իսկ շատերը մնալու. ես միայն այս գիտեմ, որ միւս օրը իմ հրաժարականը խնդրանք յետ դարձրին ինձ: Մի զարմանալի և տղայական խօսք էլ այն է, իբր թէ յուզմունքը իմ դէմ սպառնալից կերպարանք էր ստանում և ես առանց նշմարվելու խոյս եմ տուել իմ տուն, իբր թէ ինչ, կոխ կը դառնար. պարոն, այդ խօսքը անպատուութիւն է ժողովին, միթէ նա դուժարվել էր այդպիսի բաների համար. մի վախենաք, այդ չէր լինի, մենք այսքան տարի այդպիսի բան չենք տեսել մեր մէջ. մեր մէջ հ. Ստեփանէի բնավարութիւնը չը կայ, որ ծեծենք, ծեծվենք և երկար ժամանակ դատ վարենք:

Իբր թէ ժողովը որոշել է, որ հրապարակաբար ես ներողութիւն խնդրեմ և խօսքերս յետ առնեմ, ինչու, միթէ ես զրպարտել կամ սուղ եմ, որ ներողութիւն խնդրեմ. ընդհանրաւոր աւելի ես կը սնդեմ ու կը հաստատեմ ասածներս, իսկ հ. Ստեփանէն քրքան անգամ հրապարակով խոստովանել է իր մեղաւորութիւնը և թողութիւն խնդրել ինձանից, բայց ես չեմ կարողացել ներել այն բանը, որ իմ անձին չէ վերաբերում, այլ ընդհանուրին, Անա ասածիս մի նորագոյն ապացոյց եւս. ընկերութեան ընդհանուր ժողովի անթիւ, այստեղի «Dok. №8». լրագրի № 10 և 13-ում իմ վերաբերութեամբ մի քանի անուղիղ նկատողութիւններ էին գրել, որոնց հերքումը ես առաջարկել էի պ. Խմբագրին հրատարակելու: Միայն փետրվարի 22-ին խորհրդի նիստում պ. Կախազաճը յայտնեց, որ հ. Ստեփանէն ցանկանում է ներկայ լինել խորհրդին՝ մի բանի վրա խօսելու համար. խորհուրդը չընդունեց նրա զալը, որովհետեւ նրա խօսքերից միշտ տարաձայնութիւններ էին ծագում: Գետոյ նախագահը և անդամներից ունանք խնդրեցին և տարան ինձ հ. Ստեփանէնի սենակը իբր թէ հաշտեցնելու, որ իմ յօդուածը չը տպագրել տամ՝ իբրեւ վարդապետին անպատուող դրված: Այնտեղ խօսակցութեան մէջ անդամների ներկայութեամբ, հ. Ստեփանէն դիմեց ինձ. «Պարոն Գալոյ, իմ և ձեր համար դուրսը շատ են խօսում», մի զալաքի դուքանում ես խօսելիս՝ երբ ունանք պաշտպանել են ձեր ընթացքը իմ դէմ՝ միւսները ասել են, թէ «Ներայր, վարդապետը մեր որդիներին է լրբացնում» թող լրբացնէ... Ապրէսեանցին ինչ գործն է, նա խօսմ այնտեղ որդիք չունի»՝ այժմ էլ ես եմ ասում, — ծնողներին որ հանձնէ է՝ դուք ինչու էք այդքան հակառակում: Ընթերցողներին եմ թողում այսպիսի մանկավարժի արժանիքը գնահատել:

Հանդիսատեսը գրում է՝ իբր թէ թուրք վաճառականին ես էի հետո տարել ինձ պաշտպանելու: Նրբ ես իմ կալովը հրաժարական էի տալիս, էլ ինչու այն թուրքին կը բերէի ինձ պաշտպանելու: Այս թուրքը հաշի-Չէյնալ-Արդին թաղիով է, որը իր առատաձեռնութեամբ և բարեգործութեամբ յայտնի է տեղիս թէ ուսմաց թէ հայոց աստուածահաճոյ գործերում: Կա ընկերութեանը անցեալ Չատիկ տօնին Սարգիսեանց եղբայրների հետ միասին 1200 րոպէլ ընծայած լինելով՝ դուցէ նայն հետաքրքրութեամբ եկած լինէր:

Ասում են, որ այս մի տարում Ստեփանէն Ընկերութեան համար իր քարոզներով մեծ գուժաւոր է վաստակել: Դամախու թեմի դպրոցներին վերատեսուէ է ձրի: Այստեղի երկու սեռի զբաղողներին եւ ձրի տեսուէ է: Իսկ ես կը պատասխանեմ. եթէ հ. Ստեփանէն չը լինէր էլ դարձեալ անցեալ տարի շատ կը լինէր դուհաբերութիւնը յօգուտ ընկերութեան, որովհետեւ նախ ժողովրդի նիւթական գործիւնը նախկին պատճառով, շատ լաւ էր. երկրորդ Բազուի հայրի բարեգործական ճգնաժամը և առատաձեռնութիւնը արդէն յայտնի էին ամենքին, դու նրա զալուց ասա՛յ: Մինչև անգամ կարելի է ասել, որ եթէ հ. Ստեփանէն այստեղ չը լինէր, գոհաբերութիւնը դրանից աւելի չը լինէր, որովհետեւ ժողովուրդը միաբան ու չըմբռնանք կը լինէր դէպի հասարակական գործը. այն ինչ այժմ երկպառակցված է նրա պատճառով, եթէ հ. Ստեփանէն քարոզներով փող ժողովելու ընդունակութիւն ունի՝ ինչու նա զլացաւ մի և նոյն բարիքը նրանում և Դուշխում եւ անկում: Կան միամիտ մարդիկ, որոնք այս կէտը հ. Ստեփանէին պաշտպանելու համար մի գործարք վաճառ են չինել: Կիցօք թէ փող էլ լինէր վատաբան, միթէ այդ պատճառով՝ նրա հակամանկավարժական ընթացքը դէմ չը պէտք է բողոքել: Դամախու թեմի դպրոցներին նա լուի անուշով է

միայն վերադառնալ, այս մի տարւոյն քանի տարւոյն անգամ այցելութիւն զնաց, որ դպրոցներ բացաւ, որ հիններ բարեկարգեց, ինչ արաւ: Այստեղի դպրոցներին ձրի չէ տեսութիւն անում. իր և իր դպրոցի բունած բնակարանը և վառելիքը ինչ արժէն արդեօք. ծառան փող չարժէ. երկու սեւի դպրոցների ուսուցիչները որ ձրիաբար դասախօսում են «Փրկչեան համալսարանում» նրանք ոչինչ չարժեն: Ուսուցիչներին զուր տեղից արձակեց (որովհետև նրանք անցեալ տարւոյն «Մշակի» № 55-ում իր մասին գրած լուրը չը կամեցան, իր յօրինած գովասանական նամակը ստորագրելով, հերքել) և սեպտեմբերից սկսած նրանցից մինի ուսուցիչ ինքն է ստանում և իբր թէ նրա պաշտօնը կատարում, այդ վարձ չէ: Պարոններ, մի խաբէք, նա ձրի գործ կատարող չէ:

Հանդիսատեսը զարմանում է, որ ուսուցիչներ պատրաստելու հարցը անվճիւ մնաց և վերջը դուրս է բերում, որ դարձեալ ես եղայ պատճառը: Այժմ գրեթէ ամեն տեղերի հայոց մեծ մասը բարեկարգ դպրոցների և լաւ պատրաստած վարժապետների անհրաժեշտ կարիքը պարզ դուռն է, որ մնաց ընկերութիւնը: Հ. Ստեփանէն մի շատ հնարագէտ մարդ է, նա ցանկանալով որ և ինչ կերպով իր Բագու մնալը 3½ տարով ապահովել և դրամ վաստակել, կարողացել է համոզել ումանց, որ ինքը իբրև գիտնական-անձնագործ-աղբաւէր-մանկավարժ կարող է 3½ տարում Շամախու թեմի համար վարժապետների մի խումբ պատրաստել: Մենք երբեք չենք կարող հասկնալ այն մտքի հետ, որ դրամ և ժամանակ վատնենք ու Բագուի մէջ լաւ դարժապետներ պատրաստենք, այն էլ հ. Ստեփանէի ձեռքով: Այն մարդը որ միշտ բարկացած է, խաղաղ լուպէ չունի, հարստահարող, հայհոյող և անիծաբանող է, և որը անգլիականներ ծեծը և անգլաբարձար վարժուները կրթող և դաստիարակող միջոցներ է համարում, այն մարդը կարող է վարժապետներ պատրաստել և նրա պատրաստածները ինչ օգուտ կարող են տալ:

Հանդիսատեսը պ. պ. Աղամանցի և Քանանեանցի յարաբերութիւնները և խօսածները դէպի ինձ բոլորովին ծուռ և այլապէս է պատմում, քան թէ իսկապէս եղել է, ուստի և ես հրապարակով խնդրում եմ, որ պ. պ. Աղամանցը և Քանանեանցը շուտով յայտնեն, թէ արդեօք ճիշդ են հանդիսատեսի նրանց մասին գրածները, թէ արդեօք պ. Աղամանցը ինչ հնար է գործադրել իմ հրաժարականը չընդունելու. պ. Քանանեանցը իսկապէս այնպէս է խօսել թէ իմ և թէ հ. Ստեփանէի վերաբերութեամբ:

Հանդիսատեսը իր յարձակումներին մէջ ինձ պատուարկում է «անկիրթ, հնադարեան նախապաշարունքներով խորված» բառերով, բայց փաստեր և իրողութիւնները չէ բերում դրա համար: Իսկապէս շատ դժուար է մեր բանը, որովհետև ով փողը ի շատէ գրածանալ է դառնում՝ սկսում է առանց ալ ու ձախ նայելու զանազան անականներ ընծայել այն ամենին, որոնք որ և ինչ պատճառով իրանց անախորժ են եղել: Շատ բարի, ասենք թէ մենք բազմ չենք ունեցել հարկաւոր ուսմունքները անհետ, ինչ անենք, ինչպէս կը բամայեք, մեր բնական դատողութիւնն ևս չը բանեցնենք մեզ համար: Երբ բանը երկրի աստղերի և կամ երկրի խորքերի մասին լինի՝ մենք չենք խօսի, կը թողնենք որ ձեզպէս իմաստունները դատեն, բայց երբ տեսնենք հ. Ստեփանէին մեր երեսնաների վրա ահաբեկ քանոնները փչելիս՝ չը տեսնենք և չը խօսենք, երբ լսում ենք դաստիարակի փողոցային բառերը և վարմունքը՝ կամքով խուլանանք ու չիմանալանք զինքը: Ամեն տեղ կենդանիների հովանաւորութեան ընկերութիւններ են կազմում, ուրմն մենք անասուններին պաշտպանելու իրաւունք ունենք: Իսկ մեր հարազատ զաւակներին դպրոցական բարբարոսութիւնների դէմ պաշտպանելը մեզ յանցանք են համարում:

14 տարի է ընկերութեանը ծառայում եմ և ժողովրդի համակրութիւնը դէպի ինձ այնքան մեծ է եղել, որ ես արժան չեմ եղել նրա տասն բաժնից մէկին, բայց այժմ տեսէք մի մարդի ձեռքով այն համակրութեան փոխարէն հակառակ ենք կարգում լրագիրներում: Մտիկ արեք ինչքան լեզուաճարտար և հնարագէտ է հ. Ստեփանէն, որ իմ այս ճշմարտութիւնը և մարդավայել գործերի պահանջները մասին այնպիսի լուրեր է տարածում ժողովրդի մէջ, իբր թէ ընդդէմ է իմ նրա Եւրօպայի նոր ձևի կրթութեան և մանուկների դաստիարակութեան, որին նրա համար հրաւիրված է: Ես չեմ պահանջում իմ այն հակառակորդներից, պատճառ, նրանք հաւատում են մի գիտնական և ազգին անձնագործ

վարդապետի խօսքերին: Որովհետև ես ինքս էլ այդպէս եմ ընդունել մինչև լաւ ծանօթանալու: Հրաւիրում եմ Բագուի հասարակութեան ուշադրութիւնը նրա վրա:

Արդարութեան անունով, պարեն խմբագիր, խնդրում եմ՝ այս իմ պատասխանի տեղ շնորհել ձեր թերթի մօտակայ №-ներում, իբրև պատասխան «Մշակի» № № 32 և 33 գրուածին:

Յակոբ Ապրեսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 5-ին տեղի ունեցաւ ԹԻՖԼԻՍԻՍԻ կովկասեան բժշկական ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը: Նախագահում էր բժշկապետ Բրոշնի օ վսկիյ: Ընկերութեան տասնութ հաշիւը կարգաց դոկտոր Բայխ: Այդ հաշիւ մէջ ընկերութեան անցեալ տարւոյն գործունէութիւնը և դրամական ել և մուտքը ներկայացնելուց յետոյ, զեկուցանողը կարգաց Թիֆլիսի քաղաքային հիւանդանոցի անցեալ տարւոյն հաշիւը: Այդ հաշիւ մէջ ամենքի ուշադրութիւնը գրաւեցին մեր քաղաքային հիւանդանոցի խելագարները բաժնի վերաբերութեամբ հաղորդած տեղեկութիւնները: Յայտնվում է որ հիւանդանոցի մէջ գտնված խելագարների ամբողջ թիւի 16% կազմում են մեր կլասիկային գիմնալիայի բարձր դաստիարակ աշակերտները: Այդ երեսասարկները երեսու էին մտաւոր մեծ ընդունակութեան տէր մարդիկ, բայց նոցա ուղեի խանդարման մէջ պարզ նկատվում էր կլասիկային ուսման ներգործութիւնը: Հիւանդութեան ամենասաստիկ զարգացման ժամանակ նրանցից շատերը բանաստեղծական կերպով տրամադրված էին և շարունակում էին հին յունարէն և լատինարէն ոտանավորների պէս ոտանավորները չափադրել: Բժշկապետ Բայխից յետոյ, դոկտոր Վէրլին կարգաց մի զեկուցում ֆրանսիացի Ժիւլ Ֆրանսուա Նշանաւոր ինժինէրից Պետտի-գորսկի միներալական ջրերի վերաբերութեամբ արած հետազոտութիւնների մասին: Վերջապէս դոկտոր Գուբելի կարգաց մի յօդուած ուսաց կովկասեան դօրքի առողջական դրութեան վրա նոր վերջացած պատերազմի ժամանակ:

Մեզ հաղորդում են հետեւեալը. «ԹԻՖԼԻՍԻ աստիկադեմիայի բաժնիներից մէկի բժիշկը հրամայում է մի խեղճ կնոջ լցնել նրա տան առաջ գտնված հորը, որտեղ կինը աւելորդ ջուր էր ատում: Բժիշկը սպառնում է կնոջը պատժել, եթէ երեք օրվայ մէջ նրա հրամանը չը կատարեն: Կինը հողով լցնում է հորը և երբ բժիշկը գալիս է նայելու, նա հարցնում է թէ որտեղ թափէ աւելորդ ջուրը: Բժիշկը մի ուրիշ տեղ է ցոյց տալի, կնոջ տան պատի մօտ, այնպիսի տեղ, որ անցորդները դժուար կը տեսնէին: Նոր հորը պատի մօտ գտնվելով, իր մէջ թափած ջրով կնոջ սարգափն է լցրել»:

ԻՋՄԻԱՆԻՑԻՑ մեզ հաղորդում են, որ Մինօզի անդամները մի աղերսագիր են ներկայացրել Վեհ. Կաթողիկոսին, խնդրելով աւելացնել նրանց ռոճիկը: Անդամները մինչև այժմ ստանում էին տարեկան 150 ռ., իսկ այժմ նոքա խնդրում են ռոճիկը 600 ռ. դարձնել: Երբ մենք նամակի վերնագրի վրա տեսանք աղերսագիր բառը կարծեցիք որ միաբանութիւնը Վեհափառից խնդրում է աշխատել հայոց խնդրի համար...

ԹԻՖԼԻՍԻՍԻ Վօրօնցովի արձանի հանդէպ, լամպային խառութի առաջ մի փոս կայ, որից այնպիսի գաղափարներ լինում է փչում, որ անցնողները գրեթէ ուշաթափ են լինում: Եթէ փոսը ենք պատահում քաղաքի ամենալաւ տեղերում, ինչ կը լինի յետ ընկած փողոցներում:

ԻՋՄԻԱՆԻՑԻՑ մեզ գրում են, որ ձեմարանի ուսուցիչ ձեպեճեանի գործը հողեւորտ կանանցից և աշխարհականներից կազմած ժողովն է զննում: Քննութեան հետեւանքը, ինչպէս լսել է նամակագիրը, կը հրատարակվի:

Մեզ հաղորդում են հետեւեալը. «Օրերումս ԹԻՖԼԻՍԻ Սօցիալիստական գաղափար միտքներ եկել էր ծառաների հետ տեսակցելու մի լուրջատ: Վերադառնալիս սօցիալտ ընկրում է սան դուրդներին և ուշաթափ է լինում Բժիշկ Բ., որ Եւրաստահում է աղետոյ, փոխանակ օգնելու առում է կառք կանչեցէք և տարէք դրան այստեղից, եւ կարծում էի մերանցից մինն է: Բժիշկ Բ. բռնակ

վում է շատ մօտ այնտեղից, որտեղ պատահել է անցքը»:

ՊԱՆՁԱԿԻՑ մեզ հաղորդում են, որ տեղական պոլիցիան քանդել է տալի հին տները, որոնք գտնվում են նոր փողոցների գծերի վրա: Պօլիցիան մտադիր է կանոնաւորել փողոցները:

ՊԱՆՁԱԿԻՑ հաղորդում են, որ այդտեղերը մեծացնում են իրանց ապիկները: Նրանց բոլոր յուր զրած է քաղաքին մէջ հոսող փողքիկ Գեանջա գետի վրա, որի ջուրը ամառը շատ է պակասում: Նամակագիրը կարծում է, որ եթէ գանձակեցիք աշխատեն պահպանել 50-60 վերստ տարածութեամբ այն անտառները, որոնք գետի ընթացքի վրա են գտնվում, այն ժամանակ ջրի պակասութիւն չէին ունենալ, Գետի ընթացքի վրա գտնվող անտառները անխնայ կտրվում են: Սրա հետեւանքը գանձակեցոց կրած ակներկ շեւաներն են:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԻՏԱԼԻԱ

Իտալիայի նորակազմ միներալութիւնը իր ծրագիրը (պրօգրամմա) ներկայացրեց խորհրդարանին: Նախագահ—միներալ յայտնեց թէ Իտալիան կը պահպանի բոլոր տեղութիւնների հետ ունեցած լաւ յարաբերութիւնները: Նա իր չէզոք դիրքը չի փոխի, բայց հարկաւոր դէպքում կը պաշտպանէ իր պատիւը և սեփական շահերը: Ուրեմն նոր միներալութիւնը ընդունում է զօրաբանակի պէտքերը լրացնելու համար եղած որոշումները:

Արտաքին գործերի միներալ ընտրված է Կորաի կոմը որ Կ. Պօլում Իտալիան ղեկավարում է իր բոլոր գորութիւնը գործածելու կոնքրետում, եթէ հաւաքվի, որպէս զեկուսաստանի հզօր ազդեցութիւնը հակա-կռով Թունաստանի իշխանութիւնը ընդարձակելով:

Կարդինալ Ֆրանկի մի շրջաբերական է ուղարկել բոլոր կաթօլիկ տեղութիւններին որոնց հետ երբեմն յարաբերութիւններ ունեցել է Վատիկանը: Այդ շրջաբերականով խնդրում է ընտրութիւն բանալ այն հարցերի վերաբերութեամբ որոնք պատճառ են եղել դիպլոմատական յարաբերութիւնների դադարելուն: Անգլիան և Հելվետիական դաշնակցութիւնն էլ ընդունել են մի այդպիսի գրութիւն: Կարդինալ Հոհենհոֆէ պաշտօնապէս ասել է Գերմանիայի կայսրին թէ Վատիկանը պատրաստ է ընտրութեան ենթարկել այն հիմունքները որոնց վրա պէտք է հաստատվեն Գերմանիայի և պապական արքունիքի մէջ լինելու յարաբերութիւնները: Արդեն Ս. Պետերբուրգի կաթօլիկ վերագրեալ շրջաբերականը ընդունելուց յետոյ՝ որոշել է նորից ուղարկել Հռօմ պ. Ուրուսովին, որ երբեմն Ռուսաստանի ներկայացուցիչն էր Վատիկանում:

Գերմանացի անդալունական կաթօլիկները շատ վշտացած են որ Լեոն XIII իր ձեռագիր մի նամակ է ուղարկել Գերմանիայի կայսրին, իր զահակաւորութիւնը իմաց անելու համար: Այդ գրութեան մէջ պապը ցանկութիւն է ցոյց տալի գերմանական կայսրութեան և հռօմեական եկեղեցու մէջ յարաբերութիւնները լաւ դրութեան մէջ տեսնելու: Անդալունական կաթօլիկները անսխալ պատիկ այդ գրութիւնը ընդունում են իբրև մի մեծ սխալ:

Լեոն XIII հետեւելով ժամանակի պահանջներին, բաւականին փոխած է Պիոս IX-ի

քաղաքականութիւնը որ մինչև այժմ ընդունված էր Վատիկանում: Պիոս IX իրան բանտարկված համարելով, ներքին և արտաքին բոլոր հանդէսները դադարեցրել էր Վատիկանում, 1870 թվից սկսած: Բայց Լեոն XIII սովորական հանդէսով ընդունեց աւստրիական և սպանիական դեսպաններին երբ ներկայացան իրանց վկայագրերը ցոյց տալու համար:

Նորընտիր պապը ինայողական կարգադրութիւններ է անում իր ոստիկանութիւնը ցրուեց: Հրաման տուեց որ ծախեն Վատիկանում գտնված այն բազմաթիւ ձիերը և կառքերը որոնք գործածվում էին Վատիկանում պաշտօն ունեցողներին իրանց տանից ամեն օր բերել և տանելու համար:

Գուցէ Լեոն XIII այդպիսի ինայողութիւններով կամենում է ցոյց տալ կաթօլիկ ժողովրդին թէ Վատիկանի գանձը նեղ դրութեան մէջ է և ինքը պապը ստիպված է իր ոստիկանները արձակել և շատ բաներից զերկվել գանձին օգնելու համար, այնպէս որ կաթօլիկների եռանդը արժարժէ աւելի առատ նուիրելու Ս. Պետրոսի դրամը որ այժմ նախորդ տարիներից շատ պակաս է հաւաքվում: Լեոն XIII հրամայել է մի մանածուղով կազմել Ս. Պետրոսի դրամը հաւաքելու վերաբերեալ նոր կարգադրութիւններ անելու համար:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանական լրագիրներին հաղորդում են որ ապրիլի 1-ին Ֆրանկֆուրտ (Մայնի վրա) քաղաքում և Ստրասբուրգի մէջ սկսեցին գետնի տակ հեռագրական թելչիւնը: Կարծում են որ այդ հեռագրական գծի անցկացնելու գործը կը վերջանայ ներկայ տարւոյն օգոստոս ամսին:

Ապրիլի 2-ին ֆրանսիական Մենտոնա քաղաքում վախճանեցաւ Գր-Լօմէնի, որ ֆրանսիական ակադէմիայի անդամ էր և Collège de France դպրոցի պրօֆէսոր: Նա նոյնպէս պրօֆէսոր էր Բաղմարուեստեան դպրոցի մէջ: Գր-Լօմէնի 63 տարեկան էր: Կեռ 1840 թվին նա հրատարակեց իր նշանաւոր գրվածքը «Galerie des contemporains» վերնագրով: Նա մշտական աշխատակից էր «Revue des deux Mondes» ամսագրի, որի մէջ և հրատարակեց իր ամենանշանաւոր հեղինակութիւնները:

Մարտի 31-ին, ինչպէս հաղորդում են լրագիրները, Ալեքան սարերի վրա այնպիսի սաստիկ և անսպասելի ձիւնախառն փոթորիկ պատճեց, որ սարերի վրա հաղորդակցութիւնները բոլորովին կորվեցան: Մենա-Գոթմարդ սարի հիւսիսային զառիվայրի վրա ութ խաղաղի մակներ թաղվեցան ձիւնի տակ: Շուտով օգնութիւն հասաւ և խեղճերին ձիւնի տակից հանեցին: Մշակներից եթ զեռ կենդանի էին, իսկ մինը մեռած:

«Daily News» լրագրի թղթակիցը Կ. Պօլսից հեռագրում է ապրիլի 5-ից հետեւեալը. «Առում էին որ իբր թէ Սան-Ստեֆանօ եկած անգլիական մի քանի նաւաստիների և ռուսաց մի քանի սուլատների մէջ կռիւ է պատահել: Բայց բանը այսպէս էր. անգլիական 7 նաւաստիներ, որոնց թիւը էր արված ցամաք դուրս գալ Կ. Պօլսում, ծածուկ կերպով երկաթուղի նստեցին և հասան Սան-Ստեֆանօ: Նոքա այնտեղ պատահեցին ռուսաց մի քանի սուլատներին և բոլորը միասին գնացին գինեատուն որ պատկանում էր մէկ հայի և որը ռուսաց գալու պատճառով, թեթեւ չինած փայտաշէ խառնութիւն էր: Անգլիացիք լի գրպաններ ունենալով սկսեցին ռուսներին հրաւիրել: Սկսեցին միմեանց կենացներ խնդ, անգլիական թագուհու և ռուսաց կայսրի կնիքալը, և այդպէս դարձեց շարունակութիւն իրանց լեզու: Մէկը նրանցից սկսեց պնդել թէ հայը կամենում էր նրանց խաբել. այս բանը բաւական էր: Անգլիական նաւատորմի և ռուսաց զօրքի ներկայացուցիչները այս անգամ միացնելով ամենամօտիկ բարեկամների նման իրանց ուժերը, սկսեցին ցրել ու ցան անել և քանդել հայի գինեատունը: Նոր բարեկամները արդէն պատրաստվում էին կատարել ամենամօտաշէ կերպով իրանց զովելի դիտաւորութիւնը, երբ քաղաքից իրն նրանց մի քանի թիւրք ոստիկանները, որոնց զինել էր խոլիբրեով հայը: Սրանք հայի կարողացան համոզել նրանց հրաժարել իրանց դիտաւորութիւնից»:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ո Ի Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ ՊԱՏՈՒԷՐՆԵՐ

Վաճառականներից և տներ շինողներից տուած ձևերով կամ գործարանների պղծյա- կուրաններով՝ պատուհանների, դռների և վառարանների կազմաքններ (приборы): Բացի այդ ծախվում են մանր կուպոններ (замки), դռնափակեր, դռներ, սողնափակեր (задвижки), որոնք գործ են ածվում արկղների, կոճուղ- ների, պահարանների և բազմաթիվների հա- մար: Ծախվում են նմանապես ծորակներ (франзы) սամփարներ, մոմակալներ, և այլն: Այս բոլոր իրերը շինվում են Բատաշենցիների ծուլում գտնված յայտնի գործարանից են: Ցանկացողները Թիֆլիսում պէտք է դիմեն «Русский Магазинъ» Միխայելովսկայա փողոց № 85:

Կողմախի համար գործախալ Ա. Կրիժմ- ՆՈՎԱԿԻ. 4—6 (2)

ТИФЛИССКИЙ КОЖЕВЕННЫЙ ЗАВОДЪ

ԹԻՖԼԻՍԵԱՆ ԿԱՇՈՒ ԿՈՐԵՍՈՐԱՆ

Ցամոթէնայա փողոցի վրա Ցուռաց Երկե- ցու զինաց տուն № 22

Պատու ունի յայտնվում պ. պ. վաճառա- կաններին և սպառողներին, որ այդ գործա- րանում գործվում են և նորա մէջ միշտ մեծ քանակութեամբ գտնվում են ամեն տեսակ ԿԱՇՈՒՆԵՐ՝ կոշիկների, թամբերի, կառքերի ա- րուեստների համար և նոյնպէս հում կաշիներ: Մեծ քանակութեամբ վաճառելը կատար- վում է գործարանի կանտոյայում, որտեղ ընդունվում են և պատուէրներ: Մաս մաս ծախվում է Սիմոնի մայր եկեղեցու զինաց գտնվող մագալինում:

7—25 (2)

Ձ ա թ. Գ Ր Ի Գ Ր Ե Ա Ն Գ Ի զրախառնողը ստացաւ պ. Յ. ԳԻՐԻՔՉԵԱՆՑԻ աշխատա- սիրած լուսանկարները

1. Էջմիածնի զանգակատունը միաբանաց խուցերով	1 ռ. 30 Կ.
2. Ալեքսանդրապոլ քաղաքի հարաւային ընդհանուր տեսարանը	1 » 15 »
3. Холмъ-чести (Ալեքսանդրապոլի մօտ մի բլուրի վրա թաղ- ված ռուս աստիճանաւորների զերեքմանատունը	1 » 20 »
4. Մի և նոյնը — փոքր զինքով	1 » 15 »
5. Էջմիածնի	— » 40 »
6. Էջմիածնի զանգակատունը իր սրահներով — միաբանաց խու- ցերով	— » 40 »
7. » զանգակատունը	— » 40 »
8. » Ահաբանի հին դահլիճը	— » 40 »
9. » նոր դահլիճը	— » 40 »
10. Ներսիսեան լիճը հանդերձ Էջմիածնի վանքով	— » 40 »
11. » անտառ — սօսնիք	— » 40 »
12. » — ճիրանները	— » 40 »
13. Յուսուկան տառերով հին խոյաներ (կապիտէլ) որը դուրս են բերված Էջմիածնի պարսպաներսի զետի տակից	— » 40 »
14. Հովհաննիսի վանքը իր ժայռակոյններով ամրացած հին պա- րսպով	— » 40 »
15. Գեորգեան նորակառոյց ձեւարանը	— » 40 »
16. » » ննջարանը	— » 40 »
17. » » սեղանատունը	— » 40 »

Այս պատկերները գները նշանակած են առանց ձանադարհի ծախսի:

16.6 մարտի 1878 թ.

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԻ, որ ուսում է

առնել ֆարիզում, ցանկանում է ապ ՅՐԱՆ- ՍՆԵՆ ԼԵՔՈՒԻ ԴԱՍԵՐ: Կարող է նոյնպէս ԲԵՊԵՏԻՏՈՐԻ ՊԱՇՏՈՆ վարել: Հասցէն կարելի է խմանալ «ՄՇԱԿԻ» Խմբագրատանը:

6—10

ՄԻ ՕՐԻՈՐԻ, որ խոսում է ՌՈՒՍՆԵՆ

ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԻ լեզուններով — կարող է նոյնպէս դասեր տալ — առաջարկում է իր ծա- ապութիւնները ուղեկցել ԿԱՆԱՆՑ ԿԱՍ ԵՐԵ- ՆԱՆԵՐԻՆ, ՈՐՈՒՍԻ ՄԱՍԻՆԸ ԹԻՖԼԻՍԻՑ ԳՈՐԻՍ ԵՆ ԳՆՈՒՄ: Հասցէն պէտք է թողնել «Մշակի» Խմբագրատանը:

„ՍՈՒՆԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ“

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆԻ

ԶՈՐՐՈՐԴ ՀԱՏՈՐԸ

Այս հատորին բաժանորդ լինել ցանկացողներին հրաւրում են դառնալ ԲԱԳՈՒՄ «ՍՈՒՆԿ» հրատարակչին, կանխիկ ուղարկելով իւրաքանչիւր օրինակի համար 1 ռուբլ. այս հասցեով՝ Аваку Лазаревичу Григорьеву, въ Баку.

Տպագրութեանց յետոյ իւրաքանչիւր բաժանորդ կը ստանայ իրա պատկանեալ գիրքը, համեմատ իրա հասցէի, ամենայն ճշգրտութեամբ: Ա. Իրիգորեանց.

ԶԱԲ. ԳՐԻԳՐԵԱՆՑԻ ԿՈՎ ԿԱՍԵԱՆ ԳՐԱՎ ԱՃԱՌԱՆՈՑԸ

Ստացաւ Պ. ԿՈՍՏԱՆԵԱՆՑԻ աշխատանքութիւնը՝

- 1) Հիւսուածք բանից նախնի պատմագրաց հայոց, պատմութիւն ժամանակաց մարդ- պանութեան ի հայոց, մասն առաջին: Վեհմիջոցապահ: Վահան Մամի- կանեան: Գինն է 75 Կ.
- 2) Հիւսուածք Հայոց հին պատմագիրների ժամանակայ պատմութիւնը, առաջին մաս. Վեհմիջոցապահ: Վահան Մամիկանեան, զբաղաւից թարգմանեց: Գինն է 75 Կ.
- 3) Հիւսուածք Հայոց մարդպանների պատմութեան առաջին մասի համար, յառա- ջարան, ծանոթութիւնը, ժամանակագրութիւն և պատմական հա- տուածներ. զինքը երրորդ գինն է 1 ռ.—50 կոպ.

2—3

Թիֆլիսի կենդանիների հովանաւորութեան վարչութիւնը յատնում է ամենքի գիտու- թեան որ համաձայն ընդհանուր ժողովների վճիռների, այս վարչութեան կազմակերպու- թիւնը ներկայ ժամանակում հետեւեալն է. նախագահ Ս. Ա. Տալիշին, փոխնախագահ Դ. Ի. Կրիկանի, վարչութեան անդամները, իշխան Դ. Ի. Զօրջաձէ, Ս. Ն. Գրիգորեան, և անդրկողմասեան մուշոյի նաղի-Համիդ- Էֆէնդի-Մուստաֆայ-Էֆէնդի-Չաղէ, վարչու- թեան անդամութեան կանդիդատները Մ. Կ. Լօճիկէ, Ա. Ի. Տիմիրեզէ, Ա. Ի. Շամխա- րով, զանապահ Ս. Գ. Սերգէյեւ, զանա- պահի կանդիդատ, Գ. Ն. Իսախանի, քար- տուղար Ն. Ի. Մեշչերսկի և քարտուղարի կանդիդատ Ս. Ս. Շուկին:

Թիֆլիսի քաղաքային հիւանդանոցի վար- չութիւնը յայտնում է, որ իրանց երեխանե- րին ծաղիկ կարել ցանկացողները, կարող են հիւանդանոցին դիմել, որտեղ ծաղիկ պա- տուաստելը բժիշկների ներկայութեամբ կը կատարվի երեւոյթութիւն և ուրբաթ օրերը 10-մինչև 12 ժամը: Ծաղիկ պատուաստելու վճարը 30 կոպ. է, իսկ աղքատների համար ծաղիկ կարելը ձեր է:

Գերեկտորի տեղ Վերմիշկի:

2—3

КОНТОРА ГАЛЕРЕИ АРЦРУНИ

ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԵՍԻ ԳՐԱՆԵՆԵԿ

ԲԱՅ Է ԵՄԵՆ ՕՐ ԵՌԵՒՕՏԵՆՆ 9 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ բացի կիՐԼԿԻ օրերից:

ԱՊՐԻԼԻ 7.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ց Ո Ց Ց

ԹԻՖԼԻՍ 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ		ՀԵՐԱԳԻՐ		ԹՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱ-ԹՈՒՂԻ		ՓՕՍՏ		ԲԺՇԿԱՆՈՑ		«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՌԱՆԵՆԵՐ								
(Ապրիլի 6-ին)		Ր.	Կ.	Ր.	Կ.	Ր.	Կ.	Ր.	Կ.	Ր.	Կ.							
Ոսկի Դ (պղծակերպիչ)	8 35	Կողմախի և Ան-զրկովկասի քա-	1	Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների զննքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7:	11. 57	Ամեն տեսակ թէ նա-մակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7:	11. 57	Հիւանդանոցի ընդունելու-թիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ:	—	—ՎԼԿԱԿԱՎԱՍԻՉ, Վ. Ս. Տ.								
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1250	Ռուսաստան	2	Մինչև Միխայելով (խառն զննքը) կրկնվում 5 ժամ 18 րոպէ:	9. 40	Իսկ կրկնվի օրերը հասա-րակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:	9. 40	Երկու շաբթի. Վերմիշ-չէվ և Գօրախիլի ներքին հիւանդանոցներ, Բուչա-րեանց վերաբուժական և ականյի հ. Սօկոլով երե-խաների և ներքին հ. Երեքշաբթի. Վերմիշչէվ ներքին հ. Բէյլս աչքի հ. Ա. Բախուտով, կանանց, երեխաների հ. և մանկա-բարձութեան, Բախուտ սի-ֆիլիտական և կաշու հ. Չորեքշաբթի. Վերմիշ-չէվ ներքին հ. Գուբէլի կրծքային և երեխաների հ. Բախուտ կրծքային և ջղային Սօկոլով վերաբուժական հ. Հինգշաբթի. Վերմիշ-չէվ ներքին հ. Կ. Բախու-տով, կանանց և ջղային հ. Բախուտ վերեքական և կա-շու հ. Ուրբաթ. Վերմիշչէվ ներքին հ. Բախուտով ման-կաբարձութեան, կանանց և երեխաների հ. Բուչարեանց սիֆիլիտական և միջային գործարանների հ. Շաբաթ. Վերմիշչէվ ներ-քին հ. Գուբէլի երեխա-ների և կրծքային հ. Բէյլս աչքի հ. Բախուտ կրծքա-յին և ջղային հ. Սօկոլով վերաբուժական հ.	13 50	Մինչև Միխայելով (խառն զննքը) կրկնվում 5 ժամ 18 րոպէ:	9. 40	Իսկ կրկնվի օրերը հասա-րակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:	9. 40	Հիւանդանոցի ընդունելու-թիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ:	—	—ՎԼԿԱԿԱՎԱՍԻՉ, Վ. Ս. Տ.		
Հին 20 Կ. 72 պր. 1000 »	233	Ռուսաստան	3	Մինչև Միխայելով (խառն զննքը) կրկնվում 5 ժամ 18 րոպէ:	9. 40	Իսկ կրկնվի օրերը հասա-րակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:	9. 40	Երկու շաբթի. Վերմիշ-չէվ և Գօրախիլի ներքին հիւանդանոցներ, Բուչա-րեանց վերաբուժական և ականյի հ. Սօկոլով երե-խաների և ներքին հ. Երեքշաբթի. Վերմիշչէվ ներքին հ. Բէյլս աչքի հ. Ա. Բախուտով, կանանց, երեխաների հ. և մանկա-բարձութեան, Բախուտ սի-ֆիլիտական և կաշու հ. Չորեքշաբթի. Վերմիշ-չէվ ներքին հ. Գուբէլի կրծքային և երեխաների հ. Բախուտ կրծքային և ջղային Սօկոլով վերաբուժական հ. Հինգշաբթի. Վերմիշ-չէվ ներքին հ. Կ. Բախու-տով, կանանց և ջղային հ. Բախուտ վերեքական և կա-շու հ. Ուրբաթ. Վերմիշչէվ ներքին հ. Բախուտով ման-կաբարձութեան, կանանց և երեխաների հ. Բուչարեանց սիֆիլիտական և միջային գործարանների հ. Շաբաթ. Վերմիշչէվ ներ-քին հ. Գուբէլի երեխա-ների և կրծքային հ. Բէյլս աչքի հ. Բախուտ կրծքա-յին և ջղային հ. Սօկոլով վերաբուժական հ.	235	Սառկա	4	Մինչև Միխայելով (խառն զննքը) կրկնվում 5 ժամ 18 րոպէ:	9. 40	Իսկ կրկնվի օրերը հասա-րակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:	9. 40	Հիւանդանոցի ընդունելու-թիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ:	—	—ՎԼԿԱԿԱՎԱՍԻՉ, Վ. Ս. Տ.
Վերմիշչէվ 30/0 առաւի փո-չառուութեան տու. 100 »	235	Սառկա	4	Մինչև Միխայելով (խառն զննքը) կրկնվում 5 ժամ 18 րոպէ:	9. 40	Իսկ կրկնվի օրերը հասա-րակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:	9. 40	Երկու շաբթի. Վերմիշ-չէվ և Գօրախիլի ներքին հիւանդանոցներ, Բուչա-րեանց վերաբուժական և ականյի հ. Սօկոլով երե-խաների և ներքին հ. Երեքշաբթի. Վերմիշչէվ ներքին հ. Բէյլս աչքի հ. Ա. Բախուտով, կանանց, երեխաների հ. և մանկա-բարձութեան, Բախուտ սի-ֆիլիտական և կաշու հ. Չորեքշաբթի. Վերմիշ-չէվ ներքին հ. Գուբէլի կրծքային և երեխաների հ. Բախուտ կրծքային և ջղային Սօկոլով վերաբուժական հ. Հինգշաբթի. Վերմիշ-չէվ ներքին հ. Կ. Բախու-տով, կանանց և ջղային հ. Բախուտ վերեքական և կա-շու հ. Ուրբաթ. Վերմիշչէվ ներքին հ. Բախուտով ման-կաբարձութեան, կանանց և երեխաների հ. Բուչարեանց սիֆիլիտական և միջային գործարանների հ. Շաբաթ. Վերմիշչէվ ներ-քին հ. Գուբէլի երեխա-ների և կրծքային հ. Բէյլս աչքի հ. Բախուտ կրծքա-յին և ջղային հ. Սօկոլով վերաբուժական հ.	258	Գերմանիա	2	Մինչև Միխայելով (խառն զննքը) կրկնվում 5 ժամ 18 րոպէ:	9. 40	Իսկ կրկնվի օրերը հասա-րակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:	9. 40	Հիւանդանոցի ընդունելու-թիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ:	—	—ՎԼԿԱԿԱՎԱՍԻՉ, Վ. Ս. Տ.
Մարտի կուրսը 265—	258	Գերմանիա	2	Մինչև Միխայելով (խառն զննքը) կրկնվում 5 ժամ 18 րոպէ:	9. 40	Իսկ կրկնվի օրերը հասա-րակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:	9. 40	Երկու շաբթի. Վերմիշ-չէվ և Գօրախիլի ներքին հիւանդանոցներ, Բուչա-րեանց վերաբուժական և ականյի հ. Սօկոլով երե-խաների և ներքին հ. Երեքշաբթի. Վերմիշչէվ ներքին հ. Բէյլս աչքի հ. Ա. Բախուտով, կանանց, երեխաների հ. և մանկա-բարձութեան, Բախուտ սի-ֆիլիտական և կաշու հ. Չորեքշաբթի. Վերմիշ-չէվ ներքին հ. Գուբէլի կրծքային և երեխաների հ. Բախուտ կրծքային և ջղային Սօկոլով վերաբուժական հ. Հինգշաբթի. Վերմիշ-չէվ ներքին հ. Կ. Բախու-տով, կանանց և ջղային հ. Բախուտ վերեքական և կա-շու հ. Ուրբաթ. Վերմիշչէվ ներքին հ. Բախուտով ման-կաբարձութեան, կանանց և երեխաների հ. Բուչարեանց սիֆիլիտական և միջային գործարանների հ. Շաբաթ. Վերմիշչէվ ներ-քին հ. Գուբէլի երեխա-ների և կրծքային հ. Բէյլս աչքի հ. Բախուտ կրծքա-յին և ջղային հ. Սօկոլով վերաբուժական հ.	9 60	Ֆրանսիա	3	Մինչև Միխայելով (խառն զննքը) կրկնվում 5 ժամ 18 րոպէ:	9. 40	Իսկ կրկնվի օրերը հասա-րակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:	9. 40	Հիւանդանոցի ընդունելու-թիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ:	—	—ՎԼԿԱԿԱՎԱՍԻՉ, Վ. Ս. Տ.
Էջմիածնի կուրսը 112 Կ.	100	Անգլիա	1	Մինչև Միխայելով (խառն զննքը) կրկնվում 5 ժամ 18 րոպէ:	9. 40	Իսկ կրկնվի օրերը հասա-րակ նամակներ մինչև 10 ժ												